Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО
УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №-1-2 (37-38) 2020 Гуманитарные науки

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԲԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՅԼԱԼԵԶՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՎ ՀԱՄԱԼՐՎԱԾ ԽՄԲԵՐՈՒՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ Լ.Կ.

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծ-17
e-mail: lusine.mooradyan2011@yandex.ru

Վերջին տարիներին արտասահմանցի անգլախոս ուսանողների Հայաստանում սովորելու ցանկությանը զուգահեռ՝ տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում անհրաժեշտաբար կազմվել են հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման ծրագրեր, մշակվել է մեթոդական գրականություն: Այնուամենայնիվ, առաջադիր խնդիրն ամբողջությամբ ուսումնասիրված չէ, և որոնումները շարունակվում են: Տարիներ շարունակ Խորհրդային Հայաստանի մանկավարժներն ու լեզվի մշակները հայերենն իբրև մայրենի լեզու են դիտարկել և ուսումնասիրել, կատարել զանազան մեթոդական մշակումներ մայրենիի դպրոցական և բուհական դասավանդման գործընթացում: Օտար լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդներից գերակշռող են նրանք, որոնք ապահովում են արագ հաղորդակցություն: Այս առումով շատ ենք կարևորում հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման գործընթացում «Բայ» խոսքի մասի ուսուցման առանձնահատկություններին անդրադառնալը, որն էլ ներկայացնում ենք այս հոդվածում:

Հիմնաբառեր ՝ հայերեն, անգլախոս ուսանողներ, օտար լեզու, բայ:

Ներկայացված է խմբագրություն 15.01.2019թ.

Օտար լեզուներ ուսուցանելու մեթոդիկայի պատմության մեջ հայտնի են տարբեր մոտեցումներ քերականության դերի վերաբերյալ: Արագ արդյունք ստանալու համար մենք ընտրել ենք հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման իմիտացիայի և բազմակի կրկնությունների ճանապարհը [1]: Մեր հետազոտության մեջ ընդգծել ենք, որ այլալեզու ուսանողներին հայերեն ուսուցանելու ողջ ընթացքում քերականությանն անդրադարձ է կատարվում <<մեջբերումների>> տեսքով. չենք սովորեցնում սահմանումներ, կանոններ, այլ միջնորդ լեզվի օգնությամբ [2], համապատասխան օրինակների վրա բացատրում կամ հիշեցնում ենք լեզվաքերականական այս կամ այն օրինաչափությունը կամ շեղումը: Օրինակ՝ բայ խոսքի մասն ուսուցանելիս բնավ անհրաժեշտ չէ հիշեցնել, որ բայ խոսքի մասն արտահայտում է գործողություն, եղելություն, դրսևորվում է ուրույն կարգերով, ունի բառակազմական և ձևակազմական կաղապարներ, խոնարհման հարացույց և անդեմ ձևեր: Պետք չէ ժամանակ կորցնել և բացատրել, որ անկանոն են կոչվում այն բայերը, որոնց խոնարհումն այս կամ այն չափով տարբեր է բայի խոնարհման

ընդհանուր օրինաչափությունից: Այսինքն՝ նյութի տեսական մասին անդրադարձ պետք է կատարել շատ հպանցիկ:

Եթե դասընթացի սկզբնական փուլում հայերեն խոսքը հասկանալու և հայերեն խոսք կազմելու համար քերականական գիտելիքներն այնքան էլ համակարգված չեն տրվում՝ առաջնորդվելով որքան արագ, այնքան արդյունավետ սկզբունքով, ապա ուսուցման երկրորդ փուլում խոսքի զարգացմանը նպաստող լեզվաքերականական գիտելիքները համապատասխան նմուշօրինակներով ներկայացվում են մասնակիից դեպի ընդհանուրը՝ համակարգված և որոշակի հերթականությամբ:

Հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման տարբեր մակարդակներում դասավանդելու համար կազմել ենք ծրագրեր, ձեռնարկներ, մշակվել է մեթոդաբանություն: Մեր հեղինակած <<Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն>> դասագրքում զետեղել ենք <<Քերականություն>> բաժինը [3], որտեղ ոչ մի կանոն չի շարադրված:

Բայ խոսքի մասը, ի տարբերություն որոշ լեզուների, հայերենում բազմաձևույթ է, այսինքն՝ քերականական կարգերով շատ հարուստ է: Մի բայի համար կարելի է հաշվել մինչև ութսուն բայաձև: Օրինակ, եթե ռուսերենում կա բայի անցյալ մեկ ժամանակաձև, ապա դրանք հայերենում չորսն են: Հայերենի անցյալ ժամանակի բայաձևերը ինչ-որ չափով համեմատելի են անգլերենի անցյալի ժամանակաձևերի հետ: Հայերենը նաև շատ բազմաձև է ապառնի ժամանակում: Իսկ ահա ներկա ժամանակաձևը մեկն է ու միակը, որն անչափ հեշտացնում է ուսուցումը: Փոքրիկ դժվարություն է առաջացնում անորոշ դերբայի վերջավորության փոխարինումն **-ում** ձևույթով, որին էլ կարճ ժամանակում այլալեզու ուսանողները տիրապետում են: Մինչ բայ խոսքի մասի ուսուցման մանրամասներին անցնելը՝ մեկ անգամ ևս շեշտենք, որ առաջադիր հիմնախնդրի գերնպատակն այլալեզու ուսանողների հայերեն խոսք կառուցելու հմտության ձևավորումն է: Ինչ լեզվական միջոցներ էլ խոսողը գործածի, բայի ժամանակաձևերի գործածությունը գրեթե պարտադիր է խոսք ձևավորելու գործընթացում: Որպեսզի արտասահմանցի ուսանողը խոսքային գործունեություն ծավալի, նրան հաղորդակցական միջավայր է անհրաժեշտ: Այդպիսի հաղորդակցական միջավայր նախ և առաջ պետք է դառնա հայերենի դասը: Հաղորդակցության համար նպաստող միջավայր ստեղծելը կախված է հայերեն դասավանդողի ուսանողներին խոսեցնելու հմտությունից: Ցանկալի արդյունքը խոսքն է, որն ապացուցվում է խոսք կառուցելու ունակությամբ: Այդ իսկ պատճառով պիտի ջանալ, որ դասագործընթացում հանդիպող յուրաքանչյուր բառով, բայով, բայաձևով ուսանողները նախադասություններ կազմեն: Սեփական սխալների և ընկերների կատարած լեզվաքերականական սխալների ուղղումը լսելով՝ ժամանակի ընթացքում այլալեզու ուսանողները շտկում են դրանք: Բայերի, տարբեր բայաձևերի ճիշտ գործածությանը մեծապես օգնում է տեքստերի ուսումնասիրումը: Յուրաքանչյուր տեքստ 2-3 անգամ բացատրում է դասախոսը, ուսանողները սովորում են կարդալ դրանք, ապա անգիր են անում այդ տեքստերը, իսկ հետո պատմել են սովորում: Պատմելու համար անհրաժեշտ է սովորել առաջադրված համապատասխան հարցերը: Միևնույն նախադասությունը քանիցս կրկնելն անվերապահորեն տպավորվում է ուղեղում, որն էլ հաղորդվում է լեզվին և ապահովում հանպատրաստից կաղապարային խոսքի արտահայտումը, երբ ***առանց բայի ընտրության մասին երկար մտածելու և առանց այս կամ այն բայաձևի շփոթությունից խուսափելու***, նա կարող է տեքստից յուրացրած մտքեր ձևակերպել: Սկզբում այլալեզու ուսանողը յուրացրած տեքստը կվերաշարադրի փոխադրության տեսքով, ապա կարող է գրել փոքրիկ շարադրություններ, որի միջոցով կամրապնդի բայի կիրառությունը:

Բայ խոսքի մասի ուսուցումը սկսում ենք պարզից և գնում դեպի բարդը: Նախ սովորեցնում ենք ներկա ժամանակի օժանդակ բայերը (եմ, ես, է, ենք, եք, են) և զուգահեռաբար

յուրաքանչյուր դասաժամի ընթացքում հանձնարարում բայի 5-8 անորոշ դերբայի ձևեր սովորել անգիր, իմանալ դրանց իմաստը, օր.՝

գրել – կարդալ
լսել – խոսել
ապրել – սովորել
նստել – կանգնել:

Ցույց ենք տալիս, որ առաջարկված բայերից մեկը պատկանում է **ա** խոնարհման և տալիս ենք համապատասխան մեկնաբանություն: Բացառելով այդ բայը՝ մնացյալը գրատախտակին գրում ենք սյունակներով, երեք շարքով և կատարում այնպիսի փոփոխություններ, որ ստանանք ներկա, անցյալ, ապառնի ժամանակաձևերի համապատասխան դերբայները.

գր[redacted] + ում	գրել	գրել + ու
լս[redacted] + ում	լսել	լսել + ու
խոս[redacted] + ում	խոսել	խոսել + ու
ապր[redacted] + ում	ապրել	ապրել + ու
սովոր[redacted] + ում	սովորել	սովորել + ու
նստ[redacted] + ում	նստել	նստել + ու
կանգն[redacted] + ում	կանգնել	կանգնել + ու

Հետո ավելացնում ենք ներկա ժամանակի օժանդակ բայերը և սկսում ենք դրանք կիրառել նախադասությունների մեջ կամ դյուրին տեքստերում, օր.՝

Հիմա **ապրում եմ** Հայաստանում և **սովորում եմ** Երևանում, համալսարանում:

Ես **ապրել եմ** Պարսկաստանի Շիրազ քաղաքում:

Շուտով **խոսելու ենք** հայերեն:

Առայժմ բացառելով անցյալ կատարյալի հիմքով ժամանակաձևերի կիրառումը՝ ուսանողները հեշտությամբ հասկանում են այս ձևերի կազմությունը և մեծ հաճախականությամբ կատարում են գործնական աշխատանքներ: Այս կերպ բացատրելը տեսողական առումով շատ նպաստավոր է: Քանի որ մեր գերնպատակը բայաձևերի կիրառությունն է, որը խոսք կառուցելու հիմնաքարն է, ուստի մի ամբողջ դասաժամ տրամադրվում է համապատասխան օրինակներ, նախադասություններ կազմելուն: Երբ այլալեզու ուսանողները յուրացնում են ներկա, անցյալ, ապառնի ժամանակների դրական խոնարհման բայաձևերը, սկսում ենք բացատրություններ տալ ժխտական խոնարհման մասին:

Ես **եկել եմ** Հնդկաստանի Ջոթփուր քաղաքից:

Առավոտյան **կերել եմ** հաց, կարագ և պանիր:

Անցյալ ժամանակի օժանդակ բայաձևերը սովորեցնում ենք շատ ավելի ուշ:

Հրամայական եղանակի բայաձևերի ուսուցումը կարելի է կազմակերպել երկրորդ դասին .

ասա՛, արա՛, արի՛,

ապա համապատասխան հնչյուն-տառերի ուսուցումից հետո՝

տե՛ս, տա՛ր, տու՛ր, կե՛ր բայաձևերն ենք ուսուցանում:

Այսինքն, սկզբում՝ ամենագործածական անկանոն բայերի հրամայական եղանակի, ապա կազմությամբ պարզ **ե** խոնարհման բայերի հրամայական եղանակի բայաձևերի ուսուցումը: Հաջորդ քայլը **ա** խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի բայաձևերի ներմուծումն է:

Հրամայական եղանակի բայերի իմացությունը շատ կարևոր է հաղորդակցության մեջ, որովհետև խոսելիս դիմում ես, խնդրում ես, հրամայում ես իրադրությանը մասնակցող II դեմքին ինչ-որ մի բան անել: Յուրաքանչյուր օրինակ ըմբռնելուց հետո ուսանողները կազմում են դրանց նմանակը՝ ինքնուրույն:

Հրամայական եղանակի և ներկա, անցյալ, ապառնի հիմնական ժամանակաձևերի ուսուցումից հետո սկսում ենք ներկայացնել անցյալ կատարյալ ժամանակաձևը: Այս ժամանակաձևը շատ գործուն է խոսակցական լեզվում, սակայն, կազմության տարբերություններով պայմանավորված, մեր կարծիքով պետք է հետաձգել այդ նյութի ուսուցումը՝ ուսուցման երկրորդ ամսում բավարարվելով վաղակատար անցյալ ժամանակաձևերի իմացությամբ: Անցյալ կատարյալ ժամանակաձևի ուսուցման ամենակարևոր դրվագը կազմության պարզաբանումն է: Այդ նպատակով առանձին շարքերով գրվում են պարզ, բազմապատկական, կրավորական, պատճառական բայերի և սոսկածանցավոր բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևի վերջավորությունները, ցույց է տրվում **ն-ր** փոխարկումը և, օգտվելով <<Բայ>> թեմայի ամփոփիչ աղյուսակից [4], կատարվում է խոնարհում: Դրանց մի մասով (քանի դեռ նոր են բացատրվել գիտելիքները) լսարանում են կազմվում նախադասություններ, մյուսները հանձնարարվում են՝ իբրև տնային աշխատանք: Չ հնչյուն-տառի ուսուցմանը զուգահեռ բացատրվում են ժխտական խոնարհման առանձնահատկությունները: Դասի յուրացման հիմնական նախապայմանն օրինակների ինքնուրույն կազմումն է: <<Ծննդյան տոն>> տեքստի [**Error! Reference source not found.**] քերականական նյութն ամբողջովին վերաբերում է անցյալ կատարյալի ձևերին: Ինչպես նկատեցիք, այլալեզու ուսանողին այս թեման ներկայացվում է այլ կերպ, քան ավանդական դպրոցական ծրագրով է նախատեսված, քանի որ ուշադրությունը բևեռում ենք ոչ թե բայահիմքի վրա, այլ՝ վերջավորությունների: Վերոհիշյալ աղյուսակում համակարգված ներկայացված են մեր խոսքում առավել հաճախ հանդիպող կազմությամբ պարզ **ե** և **ա** խոնարհման կանոնավոր բայերի, ապա՝ անկանոն և բայածանց ունեցող բայերի անորոշ դերբայի բայաձևերը: Հերթականությամբ ներկայացվում են ներկա, անցյալ, ապառնի հիմնական ժամանակաձևերը, հրամայականը, բոլոր անցյալ ժամանակաձևերը և վերջում՝ ըղձական, ենթակայական, հարկադրական ապառնի ժամանակաձևերը: Ըղձական, ենթակայական, հարկադրական անցյալ ժամանակաձևերին, որոնք պակաս գործածական են այլալեզու ուսանողների նախնական խոսքում, անդրադարձ է կատարվում երկխոսությունների ուսումնասիրման ընթացքում: Աղյուսակով դասավանդելը, աղյուսակի օգնությամբ նախադասություններ կազմելը հեշտացնում է աշխատանքը և ժամանակի սղության հանգամանքի հետ կապված՝ շահեկան լուծում է հանդիսանում: Այս մեթոդով ջանում ենք դասաժամերի սուղ պայմաններում ապահովել դասավանդման որակը՝ միևնույն ժամանակ գիտելիքների գիտականության սվզբունքը համատեղելով գործնականության հետ: Նյութի մատուցման գիտականության և գործնականության սկզբունքների գործադրման համադրումը որակական լավ արդյունք է ապահովում: Սակայն մեր կողմից կազմված աղյուսակն ունի երկու թերություն. Նախ այն, որ ներկայացված են միայն առաջին դեմքի բայաձևերը, և երկրորդ՝ որ չեն ներկայացված ժխտական խոնարհման բայաձևերը: Սա պայմանավորված է աղյուսակը հնարավորինս փոքր ծավալներում տեղավորելու խնդրով:

Դեմքի և ժամանակի քերականական կարգերի համաձայնեցման հետ կապված հարցերն ուսանողները հեշտությամբ են հաղթահարում: Բայ խոսքի մասի ուսուցման ավելի բարդ ենթաթեմաներ կան, ինչպիսիք են բայի սեռը, խնդրառությունը, կրկնասեռ բայերի խնդրառությունը: Բայց այս թեմաները հայ ուսանողներն անգամ դժվար են յուրացնում, ուստի այս թեմաներից գիտելիքներ ավելի շատ դասախոսին են անհրաժեշտ՝ ուսանողին ճիշտ ուղղորդելու համար: Նման թեմաների արդյունավետ ուսուցմանը դարձյալ նպաստում են գործնական աշխատանքները, գործնական բնույթի առաջադրանքները: Համապատասխան օրինակներով քարտերը միշտ պետք է լինեն դասախոսի ձեռքի տակ, իսկ այդ գիտելիքների յուրացումը պետք է ստուգել համապատասխան թեստային առաջադրանքների միջոցով:

Բայի ինքնուրույն գործածություն ունեցող որոշ դերբայական ձևեր, ինչպիսին հարակատար դերբայն է (օր. եփած, խորոված, տապակած, հալած և ...), ուսուցանվում է սկզբնափուլում, ենթակայական դերբային այլալեզու ուսանողները ծանոթանում են <<Ասացվածքներ>> դասանյութը սովորելիս (օր.՝ Ասողին լսող է պետք: Հասկացողին մեկ ասա, չհասկացողին՝ հազար ու մեկ:), և, ընդհանուր առմամբ, դերբայների վերաբերյալ այլ մանրամասներ բացատրվում են երկխոսությունների ուսումնասիրման ընթացքում:

Այլալեզու ուսանողներով համալրված խմբերում **Բայ** խոսքի մասը ուսուցանվում է տեսական բնույթի հարցերը գործնականի վերածելով, որպեսզի գիտելիքները դառնան գործնական կարողություններ և, ի վերջո, այդ կարողությունները վերածվեն խոսքի: Այս փորձի ներդրումը ուսուցման գործընթաց նպաստում է հայերենի՝ իբրև օտար լեզվի կարճաժամկետ ուսուցման արդյունավետությանը:

Գրականություն

1. Աստվածատրյան Մ. , Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա 1985թ., 390 էջ:
2. Lightbown M. P., Spada N., How languages are learned, Oxford University Press, 1998, 233 p.
3. Մուրադյան Լ. Կ., Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն, Երևան, Էդիթ Պրինթ, 2018, 79-112 էջ:
4. Մուրադյան Լ. Կ., Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն, Երևան, Էդիթ Պրինթ, 2018, 93-111 էջ:
5. Մուրադյան Լ. Կ., Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն, Երևան, Էդիթ Պրինթ, 2018, էջ 63:

РЕЗЮМЕ

ОБУЧЕНИЕ ГЛАГОЛА В ГРУППАХ С ИНОСТРАННЫМИ СТУДЕНТАМИ

Л. К. МУРАДЯН

Статья посвящена обучению армянского - как иностранного языка. После приобретения способности записи и чтения, учащиеся могут читать и переводить тексты, которые включают в себя основные структуры языка и разговорных формул. Это может помочь иностранным студентам в процессе повседневной коммуникации.

На основе многолетнего опыта мы разработали методику, и в этой статье мы представляем наши наблюдения на тему обучения глаголам.

Ключевые слова: армянский язык, англоговорящие студенты, иностранный язык, глагол.

SUMMARY

THE NOUNS STUDY IN GROUPS WITH FOREIGN STUDENT

L. K. MYRADYAN

This article is about the acquisition of the Armenian language as a foreign language. After acquisition of writing and reading abilities, the learners can read and translate the texts, which include the basic language structures and conversational formulas. These can help foreign students in everyday leaving and communication process. Having many years of experience, we discuss the Armenian language as a foreign language teaching issues and in this article we present our observations on the subject of teaching the Verbs.

Keywords: Armenian, English speaking students, foreign language, Verbs.

Տպագրության է երաշխավորել բ.գ. թ., դոց. Ա. Գալստյանը 05.10.2020թ.